ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2006 թվականի N 1466-Ն

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ոլորտի զարգացման հետևյալ գերակայությունները՝

ա) ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը,

բ) էներգիայի այլընտրանքային աղբյուրները,

գ) բարձր տեխնոլոգիական մշակումները,

դ) էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը։

2. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին՝ Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ իրականացնել ինովացիոն ոլորտի գերակա ուղղությունների զարգացման ապահովմանն ուղղված միջոցառումներ։